# ԱՂՈՒԴԻ

Գտնվում է Սիսիանի շրջանում։ Ստ. Օրբելյանը մոտիկ հնչմամբ երկու գյուղ ունի հիշատակած՝ Աղխիտու և Աղիտու. առաջին անվան հիշատակությունը կապված է 8-րդ դարի կեսերի դեպքերի հետ և գավառացուցակներում չկա, բայց դեպքերի նկարագրությունից պարզ երևում է, որ Ծղուկ գավառի մեջ պիտի լիներ։ Երկրորդ գյուղը՝ Աղիտուն, Ծղուկ գավառի ցանկի մեջ է միայն։ Պետք ենթադրել, որ երկու անվան տակ միևնույն գյուղն է հիշատակված, եթե գրչագրական սխալ չկա, ապա Աղխիտու հին ձևը հետագայում պարզեցվել և Աղիտու է դարձել։ Աղիտուն Ծղուկի մեծ գյուղերից էր, 12 չափ հարկով և Սյունիքի եկեղեցական դասի 3-րդ տեղն ուներ։

Այս գյուղում է գտնվում առնվազն 7-րդ դարի ճարտարապետական արժեքավոր և հազվագյուտ մի հուշարձան, դա երեք նկուղաձև բաժիններ ունեցող թաղակապ դամբարան է, որոնց վրա կանգնեցված է մի բարձր և գեղեցիկ կոթող, որի բարձրությունը բաժանված է 2 անհավասար մասերի կամ հարկերի։ Կողքերից քառանիստ սյունանման պատերը բարձրանում են մինչև վերին կեռը, որոնք իրենց $^{1}/_{3}$-ում հատվում են. առաջին հարկում որմնասյուների կենտրոնում բարձրանում է կլոր-բազմանիստ մի սյուն, որը բաց տարածությունը բաժանում է երկու մասի. այդ տարածությունները վերևում պսակվում են պայտաձև կամարներով. դրանց վրա երկրորդ հարկն է, որի արանքի տարածությունը բազրիքի ճյուղերի նմանող երկու սյունիկներով բաժանված է 3 մասի։

Այս հազվագյուտ հուշարձանին նմանություն ունեցող մեկ հատ ևս կա Հայաստանում, Ուզունլար գյուղում (Օձուն)։

Մեջ բերված 6 արձանագրություններից 5-ը այս հուշարձանի վրա են, բայց հուշարձանի ժամանակի հետ չեն կապված. վերջինը գյուղի հյուսիսային մասում գտնվող աղբյուրի ակի վրա դրված մեծ քարի վրա է։ Բոլորն էլ հրատարակվում են առաջին անգամ։

**279. ԱՂՈՒԴԻ.** Հուշարձանի հարավային որմնասյան միջին քիվի վրա և նրա տակը. 6 տ.



ԿԱՄԱՒՆ ԱԾՈՅ ԵՍ ՓԱԽՐԱՑԴԱՒԼԷՍ ՏԱՐՍԱՑԻՃԻՆ Ո[ՐԴԻ,
ՉԱՎԴԱՆՆ ԹՈՂԻ ԻՄ ՄԱՒՐՆ ՀՈԳՈՑՆ ՀԱՄԱՐ ։ ԴԻ ՀԱՍ-
ՏԱՏԵՑԻ. ՈՎ ԽԱՓԱՆԵԼ ՋԱՆԱՑ ՑԻՄՈՑ | ԿԱՄ ՑԱՒՏԱՐԱՑ
ԻՇԽԱՆԱՑ, ՈՎ ԻՑԷ ՈՐ Է ։ԳՃԺ Ը։ Ո ԵՒ ՄԱՍՆ ՈՒ ԲԱԺԻՆ
ԸՆԴ Ց[ՈՒԴԱՑԻ ԵՒ ԸՆԴ ԽԱՉ[ԱՀԱՆՈՒԱՑՆ ԱՌՑԷ]։

*Սկզբի երեք տողի առաջին մասերը կոտրված են հնում։ Վերջին երեք տողի սկզբի մասերը նորոգության ժամանակ նոր քարով են փոխարինվել. վերջին նախադասությունը գրիչը թերի է թողել, լրացնում ենք ըստ իմաստի։*

Լուսանկ. տախտ. XXVI, 102



501—7



280. *ԱՂՈՒԴԻ. հուշարձանի հարավային որմնասյան վրա. երեսով արևմուտք. 6 տ.*

[Զ]ԳՐԻ|ԳՈՐ Ե|ՐԷՑՈՒ | ՅԱՂԱԻ|ԹՍ ՅԻՇԵ|ՑԷՔ:

*Լուսանն. տախտ.* XXV. 101



281. *ԱՂՈՒԴԻ. հուշարձանի կենտրոնի ութանիստ սյան վրա, մանրատառ. 11 տ.*

ԵՍ ՅՈՎԱՆՆԷՍ ՇԱՔԵՈ ԵՐԵՑ.
ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՍ ՊԱՇՏԱԻՆԷՔ ՅԱ.Ղ.ԱԻԹՍ ՅԻՇԵՑ[Է]Ք:

*Լուսանկ. տախտ.* XXV, 99



282. *ԱՂՈՒԴԻ. հուշարձանի հյուսիսային խորշի մուտքի կողին, մանրատառ, հայերեն և այլ գրերով խառն. 4 տ.*

283. *ԱՂՈՒԴԻ. հուշարձանի հարավային խորշի հյուսիսային պատին. ներքուստ. 3 տ.*



ՄԱՐԵԱՄ ՅԻՇԵԱՑ

284. *ԱՂՈՒԴԻ. գյուղամիջի աղբյուրի վրա դրված քարի վրա. 6 տ.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ՊԱՂ.ԱՇԱԻԿԻ, ՈՐԴԻ
ԲՈՂՈՍԻՆ, ԿԻ[Ն] ՀՌՈՒՄԻՆ | ՇԻՆԵԼ ԴՈՒԻՔ
ԱՅՍ ՎԵՐԻ ՆՈՎ|ՍԱՆԴԵՐՈՎՆ, :Ի: ՆՈՎ.
ՀՈԳՈՅՍ ՅԻՇԱՏԱԿ, ՃԱԲԱՐ ՂՈՒԼԻ ԱՂԷՆ
ՀԱՃԻ ԹԱՄԿՐԲԱՋ. ԴՎ. ԾԵՌԱՄԲ ՇԻՐՋԱՏ
ԳՐԵՑ. ԹՎ. :ՌՃԾԶ:

*Լուսանկ. տախտ.* XXV, 100